518 Փրկիչն Իր սերը թողեց իմ սրտում,

1. Փրկիչն Իր սերը թողեց իմ սրտում,
Գնաց երկինք, հոգիս է տրտում, (2)
Արի՛, կանչում եմ, շո՛ւտ արի,
Ես չեմ ապրի առանց Հիսուսի:
Արի՛, արի՛, ինձ մի՛ թողնի մեղքերին գերի:

2. Հոր աջում նստած՝ Բարեխոս է Նա,
Որ խոստացյալ Սուրբ Հոգին ինձ տա (2):
Արի՛, կանչում եմ, Սո՛ւրբ Հոգի,
Տխուր եմ ես առանց Հիսուսի:
Արի՛, արի՛, ես չեմ ապրի առանց Հիսուսի:

3. Ու սպասում եմ ես՝ աչքս Քո ճամփին,
Որ Սուրբ Հոգով օծես ինձ, իմ Տե՛ր (2):
Հիսո՛ւս, կանչում եմ՝ շուտ արի,
Որ նվաղած իմ հոգին ապրի:
Արի՛, արի՛, ինձ մի՛ թողնի աշխարհին գերի: